**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3**

*«ՆՄԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-18/5» ծածկագրով գնման ընթացակարգի գների նվազեցման շուրջ բանակցությունների նիստ*

ք. Երևան                                                                 07 ապրիլի 2018թ. ժամը 12:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ)՝ Հ. Արչունց

Գնահատող անդամներ (ԳԱ)՝ Շ. Հարությունյան

Բացող անդամներ (ԲԱ)՝ Ա. Իսկանդարյան, Հ. Մելիքյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Լ. Բաղդասարյան

*«ՆՄԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-18/5» ծածկագրով գնման ընթացակարգի գների նվազեցման շուրջ բանակցությունների նիստից հարգելի պատճառով բացակայում է Թ. Զաքարյանը:*

1. Ընդունել ի գիտություն, որ «ՆՄԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-18/5» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի Արձանագրություն 2-ի 7.2-րդ կետով որոշվում էր կայացվել N 3, 8, 12, 15, 16 և 28-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակցին որոշելու նպատակով ոչ գնային պայմաններին բավարար գնահատված «Սմարթլայն» ՍՊԸ մասնակցին հրավիրել առաջարկված գների նվազեցման շուրջ բանակցությունների: «Սմարթլայն» ՍՊԸ մասնակցի կողմից նոր գնային առաջարկ չի ներկայացվել:

Գնահատող հանձնաժողովի անդամները քննարկեցին վերը նշված հանգամանքը և կայացրեցին որոշում՝

1.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետը՝ N 3, 8, 12, 15, 16 և 28-րդ չափաբաժինների մասով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

1.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության պահանջները, գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից ուղարկել ծանուցում «Սմարթլայն» ՍՊԸ մասնակցին, որպեսզի վերջինս հրավերով սահմանված կարգով և ժամկետում գնահատող հանձնաժողովին ներկայացնի N 1, 4-7, 9-11, 13, 14, 17-27 և 29 չափաբաժինների մասով իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը՝ համաձայն հրավերով նախատեսված հավելված N 6 և հավելված N 6.1-ի:

1.3 Էլեկտրոնային եղանակով ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում ներկայացնել «Սմարթլայն» ՍՊԸ մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

**Քվեարկությամբ ընդունվել է ՝ կողմ 4, դեմ 0:**

2. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը և ՀՀ ԿԱ ՊԵԿ ներկայացված հարցման պատասխանը ստանալուց հետո:

**Քվեարկությամբ ընդունվել է՝ կողմ 4, դեմ 0:**

Հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ)՝ ____________ Հ. Արչունց

Գնահատող անդամներ (ԳԱ)՝ ____________ Շ. Հարությունյան

Բացող անդամներ (ԲԱ)՝ ____________ Ա. Իսկանդարյան

____________ Հ. Մելիքյան

Հանձնաժողովի քարտուղար՝ ____________ Լ. Բաղդասարյան